



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 13.03.1992

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Սոսկվա
Ընդունման ամսաթիվը 13.03.1992
Ստորագրման ամսաթիվը 13.03.1992
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները, դեկլարավելով Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրի 2-րդ և 4-րդ հոդվածներով, ելնելով կենսաթոշակային ապահովության բնագավառում քաղաքացիների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից, գիտակցելով, որ Համագործակցության յուրաքանչյուր մասնակից պետություն իր քաղաքացիների կենսաթոշակային ապահովության համար պետք է կրի անմիջական պատասխանատվություն, ընդունելով, որ Համագործակցության մասնակից պետությունները պարտականություններ ունեն անաշխատունակ անձանց նկատմամբ, որոնք կենսաթոշակային ապահովության իրավունք են ձեռք բերել իրենց կամ այլ հանրապետությունների տարածքում, ԽՍՀՄ-ի կազմի մեջ գտնվելու ժամանակաշրջանում, և իրականացնում են այդ իրավունքը Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքում, ընդունելով կենսաթոշակային ապահովության հարցերով ԽՍՀՄ-ի կնքած միջազգային համաձայնագրերով պարտավորությունների անվերապահ պահպանման անհրաժեշտությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հ ո ղ վ ա ծ 1

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում նրանք բնակվում են:

Հ ո ղ վ ա ծ 2

Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի զինձառայողների կենսաթոշակային ապահովությունը և նրանց թոշակային ապահովության միջոցների հատկացման կարգը կարգավորվում է հատուկ Համաձայնագրով:

Մինչև հատուկ Համաձայնագրի կնքումը, Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի զինձառայողների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է պետությունների կողմից սույն Համաձայնագրի

ստորագրման պահին գործող օրենսդրությանը համապատասխան:

Հ ո ղ վ ա ծ 3

Սույն Համաձայնագրով կենսաթոշակային ապահովության իրականացման հետ կապված բոլոր ծախսերը կրում է ապահովություն տրամադրող պետությունը: Փոխադարձ հաշվարկներ չեն կատարվում, եթե երկկողմ համաձայնագրերով այլ բան նախատեսված չէ:

Հ ո ղ վ ա ծ 4

Համաձայնագրի մասնակից պետությունները վարում են կենսաթոշակային ապահովության վերաբերյալ օրենսդրության ներդաշնակության քաղաքականություն:

Հ ո ղ վ ա ծ 5

Սույն Համաձայնագիրը տարածվում է քաղաքացիների կենսաթոշակային ապահովության բոլոր տեսակների վրա, որոնք սահմանվել են կամ կսահմանվեն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությամբ:

Հ ո ղ վ ա ծ 6

1. Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների կենսաթոշակի նշանակումը կատարվում է ըստ բնակության վայրի:
2. Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների կենսաթոշակի իրավունքի սահմանման համար, այդ թվում՝ արտոնյալ հիմունքներով և բազմամյա ծառայության համար, հաշվի է առնվում այդ պետություններից ցանկացածի տարածքում, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժը՝ մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ժամանակահատվածի համար:
3. Կենսաթոշակների հաշվարկումը կատարվում է աշխատանքային ստաժի մեջ հաշվարկվող աշխատած ժամանակաշրջանների աշխատավարձից (եկամուտներից):
Սյն դեպքում, եթե Համաձայնագրի մասնակից պետություններում մտցվում է ազգային տարադրամ, աշխատավարձի (եկամտի) չափը որոշվում է՝ ելնելով կենսաթոշակի նշանակման պահին պաշտոնապես սահմանված փոխարժեքից:

Հ ո ղ վ ա ծ 7

Համաձայնագրի մասնակից պետություններին սահմաններում կենսաթոշակառուի տեղափոխման դեպքում թոշակի վճարումը նախկին բնակության վայրում դադարեցվում է, եթե նույնատիպ թոշակ նախատեսված է նոր բնակության վայրի պետության օրենսդրությամբ:
Կենսաթոշակի չափը վերանայվում է ըստ թոշակառուի նոր բնակության վայրի, Համաձայնագրի մասնակից պետության օրենսդրությանը համաձայն, պահպանելով սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված պայմանները:

Հ ո ղ վ ա ծ 8

Համաձայնագրի մասնակից պետություններում կենսաթոշակային ապահովությունն իրականացնող մարմինները միմյանց հետ համագործակցում են իրենց կենտրոնական մարմինների միջև որոշվող համաձայնության կարգով:
Կողմերը լիազորում են իրենց իրավասու մարմիններին՝ կնքելու նշված համաձայնագրերը սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում:

Հ ո ղ վ ա ծ 9

Համագործակցության մասնակից պետությունները բանակցությունների միջոցով քննարկում են սույն Համաձայնագրով չկարգավորված, ինչպես նաև դրա կիրառման հետ կապված հարցերը:

Հ ո ղ վ ա ծ 10

Համագործակցության մասնակից պետությունները պարտավորություն են ստանձնում միմյանց տեղեկացնել իրենց պետություններում գործող կենսաթոշակային օրենսդրության, դրա հետագա փոփոխությունների մասին, ինչպես նաև ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ թոշակի իրավունքը և դրա չափը որոշելու համար վճարական նշանակություն ունեցող

հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Հ ո ղ վ ա ծ 11

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների և ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտած պետությունների տարածքում մինչև 1991 թվականի դեկտեմբերի 1-ը պատշաճ կարգով տրված կենսաթոշակային ապահովության անհրաժեշտ փաստաթղթերը Համագործակցության մասնակից պետությունների տարածքում ընդունվում են առանց օրինականացման:

Հ ո ղ վ ա ծ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ ո ղ վ ա ծ 13

1. Սույն Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից կարող է դրանից դուրս գալ՝ ավանդապահին ուղարկելով համապատասխան գրավոր ծանուցում: Այդ մասնակցի նկատմամբ Համաձայնագրի գործողությունը դադարում է այդպիսի ծանուցումը պահառուի կողմից ստանալու օրվանից 6 ամիսը լրանալուց հետո:

2. Սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների ծագող կենսաթոշակային իրավունքները չեն կորցնում իրենց ուժը նաև Համաձայնագրից այն մասնակից պետության դուրս գալու դեպքում, որի տարածքում նրանք բնակվում են:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1992 թվականի մարտի 13-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը դրա հաստատված պատճենը կուղարկի սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին:

**Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտի 13-ից:*